



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

ԿԱՆՈՆԱԳԻՐ  
ՈՐԲԱՍԻՐԱՅ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՀԱՅՈՑ

Ի ԳՐԱԳՐԻ

Հաստատւոյ ի 1 Մայիս 1899 եւ  
Վարկարկեալ յ'Ազգ. Առաջնորդարանէ  
1901 ՅՈՒՆՈՒՍԻ 1

Société Arménienne « VORPASSIRATZ »  
Protectrice des Orphelins au Caire

Fondée le 1 Mai 1899  
Autorisée par le Patriarcat Arménien  
Du Caire ( Egypte )



ԳՐԱԳՐԻ  
ՏՊԱԳՐ . ԱՐՇԱՆՈՅՄԻ

1901

11

2794

1/2



364  
2794



Կեանքերն իս՝ ծով աղեկո՞ծ ,  
Ու արեւելիս՝ խորունկ խոց ,  
Մենք , հայ որքե՞ր սկսալ շարսն ,  
Կարճ եկի՞ք ձեր օգնութեան ,  
    Հայե՛ր սարսքեան ,  
Յիշեցի՛ք մեզ , մի՛ մոռնալ :



# ԿԱՆՈՆԱԳԻՐ ՈՐԲԱՍԻՐԱՑ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՀԱՅՈՑ

Ի ԳՆՀԻՐԷ

Հաստատւոյ ի 1 Մայիս 1899 եւ  
Վարեացեալ յՄ.զ.գ. Առաջնորդարանէ  
1901 ՅՈՒՆՈՒՍԻ 1

Société Arménienne « VORPASSIRATZ »  
Protectrice des Orphelins au Caire

Fondée le 1 Mai 1899  
Autorisée par le Patriarcat Arménien  
Du Caire ( Egypte )



ԳՆՀԻՐԷ  
ՏՊԵՐԻ . ԱՐՇԱՆՈՅՍԻ  
1901

Ընկերութիւնս կը ձեռնարկէ հիմնելու « ԿԵՒՐՈՆԱԿԱՆ ԱՐԱՄԵԱՆ ՈՐԲԱՆՈՅ » անուան տակ Որբանոց մը ի Գահիրէ, որ է իւր Մայր նպատակը, ուր պիտի խնամուին անխտիր Տաճկաստանի Գաւառներէն Հայ սրբեր :

Յօդ. 3. — Եթէ Ա. շրջանի լրման գոյացած պահեստի գումարն չ'ըբէ 10 որբերու տարեկան ծախքերուն բաւող հասոյթն, Ընկերութիւնս կը վերսկսի իր Բրդ. շրջանը շարունակել, համաձայն Յօդուած մէկի արամագրութեանց և այսպէս յաշորդաբար :

### ԳՈՐԾԱԴՐՈՒԹԻՒՆ

Յօդ. 4. — Ընկերութիւնս իւր նպատակի գործադրութեան կ'սկսի, երբ յիտուն Եգիպտ. լիրայ պահեստի գումար մը ապահովէ, և իր սրբեգրած 10 երկսեռ սաներուն միամեայ ծախքերուն բաւող հասոյթ մը ունենայ :

### ԿԵՒՐՈՆ, ԿԱԶՄՈՒԹԻՒՆ ԵՒ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Յօդ. 5. — Ընկերութեանս կեդրոնն է Գահիրէ, որուն կը պատկանին նոյն նպատակաւ քաղաքիս շրջակայքը կազմուած ու կազմուելիք բոլոր մասնաճիւղերը :

Յօդ. 6. — Ընկերութիւնս կազմուած է իւր

նպատակն ու սրայմաններն ընդունող և գործադրող երկսեռ ազգայիններէ, որոնց օրինաւոր գումարումը կը կոչուի Ընդհ. Ժողով, ուր ընկերուհիք ձայն չեն ունենար, այլ միայն կը նկատուին նուիրատուներ :

Յօդ. 7. — Ընդհ. Ժողովն ունի Մայր Դիւան մը և Գործադիր Ժողով մը. Առաջինն համարառու է յանուն բոլոր անդամոց, երկրորդն՝ համարատու է Առաջնոյն և իր Ատենաճապեան՝ պաշտօնական ներկայացուցիչ Ընկերութեան :

### ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

Յօդ. 8. — Ընդհ. Ժողովն կը բաղկանայ ամեն այն ազգայիններէն, որք ամէն ամիս մէկ կամ մէկէ աւելի բաժին վճարելով կ'անդամակցին Ընկերութեանս :

Յօդ. 9. — Ընդհ. Ժողովոյ իրաւունքն ու պարտականութիւնքն են .

Ա. Գաղանի քուէարկութեամբ ընտրել Մայր Դիւանն ու Գործ. Ժողովն :

Բ. Տարին մէկ անգամ օրինաւոր նիստ գումարելով Մայիս ամսոյ մէջ, նախորդ Վարչութենէն հաշիւ առնել և յաշորդ Վարչութիւնն ընտրել, ի պահանջել հարկին կրեայ նաև գումարուիլ արտակարգ :

Յօդ . 10 . — Ընդհ . Ժողովոյ նիստերն օրինաւոր կը նկատուին , երբ ի Գահիրէ ներկայ անդամոց մեծամասնութիւնն կայ և Վարչութիւնն կազմող անդամներէն վեցն ներկայ են . սակայն եթէ Ա . և Բ . հաւարումներով այս մեծամասնութիւններն չ'ըստնան , Մայր Դիւանն պարտական է Գործ . Ժողովէն պատրաստուած հաշուեկշիռն և տեղեկագիրն ներկայել տեղւոյս Ազգ . Վարչութեան , յատուկ պաշտօնագրով , ի քննութիւն և ի վաւերացումն :

**ՄԱՅՐ ԴԻՒԱՆ**

Յօդ . 11 . — Ընդհանուր Ժողովոյ Մայր Դիւանն կը բաղկանայ 4 անդամներէ . մէկ Ա . տեհապետ , մէկ Փոխ-Ատենապետ , մէկ Ատենադպիր և մէկ Փոխ-Ատենադպրէ :

Յօդ . 12 . — Մայր Դիւանի պաշտօնն է .

Ա . Սովորական և արտակարգ նիստերու հրաւիրել Ընդհ . Ժողովն , ուր կը հրաւիրուի նաև Ազգ . Վարչութենէն մի ներկայացուցիչ :

Բ . Հսկել սոյն կանոնագրի յօդուածոց ճշդիւ գործադրութեանը և Ընդհ . Ժողովոյ նիստերուն կարգապահութեանը :

Գ . Անյապազ ի նիստ հրաւիրել նորընտիր Գործ . Ժողովն , և յանձնել նորա Ընկերութեան

տուճաշները , հազորդելով Ընդհ . Ժողովոյ մէջ առեհագրուած որոշումները , նաև հրահանգ տալ ասոնց գործադրութեանը :

Դ . Ամէն քառամսէի լրման Գործ . Ժողովէն երկերկու օրինակի վրայ հաշուեկշիռ պահանջել և յետ քննութեան վաւերացնելով հրատարակել տեղական Հայաթերթի մը միջոցաւ :

Ե . Մայր Դիւանն պարտաւոր է Ազգ . Առաջնորդարանի տեղեկագրել Իր և Գործ . Ժողովոյ անդամոց մասնակի կամ ամբողջական փոփոխութիւններն :

Զ . Ամէն տարեշրջանի լրման միամեայ տեղեկագիրն ու հաշուեկշիռն ներկայել Ընդհ . Ժողովոյ : Մայր Դիւանն Գործ . Ժողովէն մատուցեալ երկու քառամսեայ հաշուեկշիռները , ինչպէս նաև տարեկան տեղեկագիրն ու հաշուեկշիռն ստանալէն մինչև 21 օր , պարտի մատուցանել Պատ . Բաղաքական Ժողովոյ ի քննութիւն և ի վաւերացումն . հակառակ պարագային Պատ . Բաղ . Ժողովն դրաւորապէս կ'ազդարարէ Ընկերութեանս Մայր Դիւանին , որ եթէ մինչև 21 օր չ'մատուցանէ տեղեկագիրն ու հաշուեկշիռներն , 21 օրուան պայմանաժամով երկրորդ ազդարարութիւն մը ևս կ'ուղղէ , եթէ այս ազդարարութիւնն ալ անհետեանք

մնայ, Պատ. Բաղ. ժողովն իրաւունք ունի  
 փութով քննելու թէ ս՞ով է պատասխանատուն.  
 Մայր Գիււանն թէ Գործ. ժողովն. այնուհետեւ  
 քննութեան արդիւնքին համաձայն՝ անմիջապէս  
 պաշտօնէ կը դադարեցնէ պատասխանատուները,  
 ծանուցանելով իրողութիւնն պաշտօնի վրայ  
 գտնուողներուն՝ որ անյապաղ կը ձեռնարկեն  
 կազմելու Ընտրողական Մասնախումբ մը բաղ-  
 կացած երեք անդամներէ, մին Առաջնորդա-  
 րանէն, երկրորդը պաշտօնի վրայ գտնուող ան-  
 դամ մը և երրորդն Ընկերութեանս վտահանի  
 մէկ անհատն. այս Մասնախումբին առժամանա-  
 կեայ պաշտօնն է Ընդհ. ժողովոյ գաղտնի  
 քուէարկութեամբ պահսածներու յաջորդներն  
 ընտրել և արդիւնքն տեղեկագրել Ազգ. Պատ-  
 վարչութեան, այսպէս վարուիլ նաև երբ պա-  
 տասխանատուութիւնն ամբողջ մարմնոյ մը վրայ  
 կը ձանրանայ:

**ԳՈՐԾԱԳԻՐ ԺՈՂՈՎ**

Յօդ. 13. — Գործ. ժողովն կը բաղկանայ  
 Ընդհ. ժողովոյ գաղտնի քուէարկութեամբ ընտ-  
 րած եօթն անդամներէն, որք իրենք իրենց  
 մէջ կը կատարեն պաշտօնարաշխութիւնն, կար-  
 գելով մէկ Ասենապետ, մէկ Ատենագլխի,

մէկ Փոխ-Ատենագլխի, մէկ Համարակալ, մէկ  
 Գանձապետ և երկու Խորհրդական: Գործ.  
 ժողովոյ Գիււանը կը հազորդէ պաշտօնարաշխու-  
 թեան արդիւնքը Մայր Գիււանին:

Յօդ. 14. — Գործ. ժողովոյ պարտաւո-  
 րութիւնն է Ընկերութեանս ելեմտական բոլոր  
 գործերն կատարել. բարևք մատակարարելով  
 նորա հասոյթն ու ծախքերն, հսկելով միան-  
 դամայն որ Ընկերութեան հասոյթներն իւր հիմ-  
 նական նպատակին գործածուին. առ այս Գործ.  
 ժողովոյ բոլոր անդամներն համերաշխաբար պա-  
 տասխանատու են հանդէպ Ընկերութեան Ընդհ.  
 ժողովոյ:


Յօդ. 15. — Գործ. ժողովն պարտի Մայր  
 Գիււանին մատուցանել իր գործառնութեանց  
 քառամսեայ հաշուեկշիւը, ինչպէս նաև տարե-  
 կան հաշուեկշիւն ու տեղեկագիրն երկերկու օ-  
 րինակի վրայ, այս վերջնայն մէջ ցոյց կուտայ  
 յաջորդ տարուան համար Ընկերութեան յա-  
 աջգլխութեանը օգտակար տեսած միջոցներն:

Յօդ. 16. — Գործ. ժողովն արտօնեալ է  
 իր մէջէն պահսած անդամներուն տեղ յաջորդ-  
 կարգել Ընդհ. ժողովոյ մէջ համեմատական  
 քուէ շահող անդամներէն յարմարագոյնը, և  
 պարտի պաշտօնապէս ծանուցանել սոյն ընտ-

բութիւնը Մայր Գիւանին ի վաւերացումն (սոյն յորումի տամարոտիւնները գործարեղի չ'են 12 ռդ . Յօդումի 2 ռդ . եւ 6 ռդ . պարբերութեանց նախատեսած պարագային մեջ :

Յօդ . 17 . — Գործ . ժողովն ամիսն երկու անգամ օրինաւոր նիստ կ'ունենայ՝ ամսուն կէս և լրման շրջանին մէջ . սակայն ի պահանջել հարկին կրնայ նաև գումարիւ արտաքոյ կարգի :

ՀԱՏՈՒՄ Բ .



ՀԱՍՈՅԹ ԵՒ ԳՈՐԾԱՌՆՈՒԹԻՒՆԷ

Յօդ . 18 . — Որբասիրաց Ընկերութեան հասոյթից աղբիւրներն են .

- 1 . Ընկերաց ամսավճարներէն գոյացած գումարն .
- 2 . Նպատակներ ու նուէրներ .
- 3 . Թատերական ներկայացումներ .
- 4 . Վիճակահանութիւն և հանգանակութիւն .

Այս վերջնոց երկուքն պիտի գործադրուին Ազգ . Առաջնորդարանի կանխատու հաւանութեամբ և Ընկերութեանս Գործ . ժողովոյ պատասխանատուութեան տակ համահաճ հա-

ւանութեամբ Ընդհանուր ժողովոյ Մայր Գիւանի :

Յօդ . 19 . — Ընկերութեանս անգամակցող անձինք պարտին վճարել ամսական 5 դահ . ողջ եղիպտական , ամեն մէկ բաժնի համար . իսկ ընկերուհիք՝ 2 դահեկան եղիպտական ողջ . ի փոխարէն ստանալով վաւերացեալ ընկալագրեր Ընկերութեանս Գանձապետէն :

Յօդ . 20 . — Ընկերութեանս անգամակցող անձինք պարտին ամեն ամիս կանոնաւորապէս վճարել իրենց բաժնեդներն , յապահովութիւն իւրաքանչիւր ընկերի վճարած գումարի , ամեն վեց ամսէի լրման վճարման քանակն պաշտօնապէս կը հրատարակուի թերթով մը :

Յօդ . 21 . — Ընկերութիւնս կ'ունենայ եօթը պաշտօնական տեսքեր . ուսոյնէ մին կը վերաբերի Ընդհ . ժողովոյ և Մայր Գիւանի Ատենադրութեանց : 2 Ընդօրինակութեան տեսք Մայր Գիւանի և Գործ . ժողովոյ : 1 Ատենադրութեան տեսք Գործ . ժողովոյ : 1 Օրհաչոյ : 1 Մայր հաչոյ և 1 Օժանդակ տեսք բաժանորդագրութեանց համար . օրհաչոյ և Մայր հաչոյ տարները պէտքէ վաւերացած ըլլան Գիւանի և Գործ . ժողովոյ Ատենապետաց ստորագրութեամբ և Որբասիրաց Ընկերութեան կնքով , զս-



ըրս կը վաւերացնէ տեղւոյս Պատ. Քաղ. Ժողովն:

Յօդ. 22 . — Ընկերութեանս տարեկան ընդհանուր հասոյթէն, որդեգրելոց և Ընկերութեան տարեկան ծախքերն զեղջելէ յետոյ, մնացեալ գումարն կը բարգուտի պահեստի գումարին վըրայ, այս գումարով կը գնուի պարգևաւոր պաշտատուներ:

Յօդ. 23 . — Ընկերութեանս պահեստի գումարն և արժեթղթերն Քահիրէի Ալգ. Առաջնորդարանին կը յանձնուին ի պահ, որոնց փոխարէն ստացական մը կ'առնուի յանուն Որբասիրաց Ընկերութեանս:

Յօդ. 24 . — Պարգևաւոր պարտատուներուն տրեւաններն ինչպէս նաև նոցա վիճակելի պարգևներն միմիայն Ընկերութեանս նպատակին կը վերաբերին, անգամք իրաւունք չ'ունին այդ պարտատուներէն և նոցա վիճակելի պարգևներէն բան մը պահանջելու:

Յօդ. 25 . — Որդեգրելոց յատկացեալ տարեկան ծախքերն կը մատակարարուին երեք մասնավճարներով. այսինքն տարւոյն Մարտ, Յուլիս և Հոկտեմբեր ամիսներուն մէջ:

Յօդ. 26 . — Ամեն անհատ սր միանուագ կը նուիրէ Ընկերութեանս առնուազն 20 Անգլ. սօկի կամ համարժէք նպատակ մը, կը հաշակ-

ուի «ԲԱՐԵՐԱՐ ՈՐԲԱՍԻՐԱՅ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ» . իսկ միայն 5 սօկի նպատակն, «ՊԱՇՏՊԱՆ ՈՐԲՈՅ» տիպոսն կ'ընդունի:

Յօդ. 27 . — Մայր Գիւանի և Գործադիր Ժողովոյ պաշտօնավարութիւնն կը տեէ երկու տարի և վերընտրելի են:

ՀԱՏՈՒԱԾ Գ .

— □ o □ —


### ԼՈՒԾՈՒՄՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Յօդ. 28 . — Ընկերութիւնս կը շարունակէ իւր գոյութիւնը ց'որչափ կարող է պահեստի գումարին չ'զպելով իր սեպհական եկամուտներով պաշտպանել առնուազն 5 որբ. հակառակ պարագային կը լուծուի Ընկերութիւնն և Ընկ. մնացեալ անդամներուն խորհրդակցութեամբ տեղւոյս Ալգ. Վարչութեան կողմէ կարգուած մասնախմբի մը ձեռօք ( եթէ 50 սօկիէն աւելի է) կը գնուի հող մը, որուն հասոյթը կը յատկացուի ԱՐԱԲԿԻՐԻ ՈՐԲԱՆՈՅԻՆ . եթէ որքանոց գոյութիւն չ'ունենայ, Առաջնորդարանի իրաւասութեան տակ գտնուած ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐՈՒ, իսկ եթէ առ առաւելն 50 սօկի է, կը զրկուի Աջաշինի Ալգային Առաջնորդարանին, Որբանոցին

տրուելու համար : Լուծման պաշտօնային , Բնկերութեան բոլոր գոյքերը և սոմարները , որու ձեռքի մէջ սր գտնուին , Առաջնորդարանը իրաւունք ունի պահանջելու և ստանալու , և Բնկերութեան մնացեալ անդամոց խորհրդակցութեամբ ու գիտութեամբ , գոյքերն ու արժեթղթերն ծախելով գրամի կը վերածէ և պատրաստի գրամին հետ կը զրկէ Արաբկիր իր նըպատակին գործածելու համար , իսկ սոմարներն կը մնան Առաջնորդարանի գիւանատան մէջ :

**ՎԵՐԱՔՆՆՈՒԹԻՒՆ**

Յօդ . 29 . — Ներկայ կանոնագիրը վերաքննելի է սկսած թուականէն 5 տարի վերջը . սակայն եթէ պարագաներն ստիպեն , Բնդհ . Ժողովն կարող է անոնց վրայ կարեւոր նոր յօդուածներ յաւելուլ , առանց երբէք նպատակին ու Առաջնորդարանի վերաբերեալ մասերուն մէջ փոփոխութիւն մտցնելու . փոփոխեալ , յաւելեալ կամ յապուեալ մասերն ու յօդուածներն գործադրելի են Ազգ . Առաջնորդարանի վաւերացումէն յետոյ :



Դիւան Գործ . Ժողովոյ

Թիւ 123/76

Արժանապատիւ Հայր  
Տէր Մամբրէ Բհնյ . Վարդանեան  
Նախագահ Պատկ . Քաղ . Ժողովոյ Գաւառ .  
Վարչութեան  
Ի Գահիրէ

Բնկերութեանա Հիմնական Կանոնագիրը սակէ յառաջ Բնդհ . Ժողովոյ Պատ . Դիւանին կողմէ մատուցուած էր , առ Ձերդ Արժանապատուութիւնն՝ հարկ եղած վաւերացումը շնորհելու համար :

Նոյն Կանոնագրի ինչ ինչ մասերուն վրայ Ազգ . Գաւառ . Վարչութեան Պատկ . Քաղ . Ժողովոյ կողմէ եղած բարեփոխումները Բնկերութեանա կողմէ ընդունուած լինելով , ներկայիւս պատիւ ունինք Ձեր Արժանապատուութեան մատուցանելու սրբազրեալ Կանոնագրի երկու օրինակները , և կը խնդրենք որ բարեհաճիք վաւերացնելէ վերջ մի օրինակը վերադարձնել մեզ :

Վստահ թէ , Ձեր Արժանապատուութեան հետ Ազգ . Գաւառ . Պատկ . վարչութիւնն ևս պիտի հաճի իւր հոգածութիւնն շնորհել Բնկե-

բութեանո ըտրդաւածման համար, կանխաւ կը նուիրենք մեր խորին շնորհակալութեան եւ անկեղծ յարգանաց հաւաստին:

Մնամք յարգանօք

Ի զիմաց Գործ. Ժողովոյ Որբասիրաց Ընկերութեան Հայոց Գահիրէի

Ատենադպիր Ատենապետ

Ա.ՊԱ.Հ ՊԵՏՐՈՍԵԱՆ Ա.Ռ.Է.ՔԵՂ. Մ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

Ա.Ռ.Ա.ՋԵՈՐԴՍՐԱՆ ՀԱՅՈՑ  
Եգիպտոսի Գահիրէ 21 Յունվար 1901

Դիւան Քաղաքական Ժողովոյ  
Ազգ. Գաւառ. Վարչութեան  
Թիւ 21

Մեծապատիւ  
Արմենակ Էֆէնտի Կոկանեան

Բ. Ատենապետ Պատ. Ընդհանուր Ժողովոյ  
Որբասիրաց Ընկերութեան Հայոց

Ի Գահիրէ

Մեծապատիւ Էֆէնտի՛.

Պատ. Ընկերութեանդ Գործադիր Ժողովն՝  
1900 Դեկտ. 17 թուական եւ 123/76 համար մի  
պաշտօն ազրով Առաջնորդարանիս մատուցած էք,  
Պատ. Քաղաքական Ժողովոյ կողմանէ կողմ

բարեփոխմանց համեմատ պատրաստուած Ընկերութեանդ Կանոնադրէն երկու օրինակ եւ անոր վաւերացումը խնդրած:

Ազգ. Գաւառական Վարչութեան Պատ. Քաղաքական Ժողովը՝ իւր տարւոյս Յունուար 1 թ (Ն. Տ.) նիստին մէջ, յետ քննութեան վաւերացուցած ըլլալով Պատ. Դիւանից կողմանէ եւս ստորագրեալ նոյն կանոնադիրը, անոր մեր կողմանէ հաստատուած մի օրինակը ներփակեալ կ'ուղարկենք Ձեզ:

Այս ասթիւ պարօք կը համարինք մեզ զովել Պատ. Ժողովոյ ջանքերը, Ընկերութեան ըտրդաւածմանն համար, ի մխիթարութիւն առնօք որրիկներուն, որք հայրենիքէն օգնութիւն կ'ազատակեն:

Կար եւ յաջողութիւն մաղթելով Ձեզ

Մնամ ազօթարար

Առաջնորդ Եգիպտոսի Հայոց

ՅՈՎԱԷՓ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՅՎԱԶԵԱՆ

ՎԱԿԵՐԱՅՈՒՄՆ

Թիւ 20

Այգուշիմ Գաւառական Վարչութեան  
Պատ. Քաղաքական Ժողովոյ տարւոյս Յուն.  
ուար (Ն. Տ.) 1 թ նիստի մէջ տղամ որչկան



11-24948

հաճառյն կ' շարեացնենի սոյն Կանոնա-  
գիրք մեր ստորագրութեա կը եւ Առաջնորդա-  
րանիս պաշտօնական կնիքով :

Առաջնորդ Հայոց Եգիպտոսի  
ՅՈՎՍԷՓ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՅՎԱԶԵԱՆ

1901 Յունուար 21

Գահիրէ

( Կնիք )



ՀՀ Ազգային գրադարան



NL0657128

